ՆՈՐԱՀԱՅՏ ՁԵՌԱԳԻՐ ՄԸ. ՍԱՆԴՈՒԽՏԻ ԱՂՈԹԱՐԱՆԸ

Փենսիլվանիա նահանգի Վիլլանովա քաղաքի բնակիչ տիար Էտուրդտ Թեքիրյանի մոտ տարիներե ի վեր ի պահ կմնա հայերեն հին ձեռագիր մը, հավանաբար գրված ԺԵ դարուն: Ձեռագիրը փոքրիկ առձեռն աղոթարան մըն է, եկեղեցական տոնացույցով միասին, վոր քահանաներ գործածած են: Մատյանի 52բ թերթի ներքևի մասեն կստուգվի գոնե քահանայի մը անունը՝ Տեր Հովսեփ, որուն պատկանած է աղոթարանը ատեն մը. «ի վայելումն տէր յօսէփին»:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

Թվական՝ անհայտ: **Վայր**՝ անհայտ: **Գրիչ**՝ Սանդուխտ: **Թերթք**՝ 112:

Ստացող՝ (հետագայի) Տեր Հովսեփ: **Նյութ**՝ թուղթ. 13,5 սմ×9,5 սմ.:

Գրություն՝ բոլորգիր: **Տող**՝ 18: **Մանրանկարք**՝ չիք: **Կազմ**՝ խավաքարտ մագաղաթով պատված: **Պահպանակք**՝ ձեռագրին մաս կազմող երկու թերթեր փակցված են կազմի ներքնամասին: **Հիշատակարանք**՝ գրչի 26ա, 36բ:

Հանգամանք՝ գոհացուցիչ, սակայն կալմը քայքայված և շարք մը թերթեր ինկած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. Աղոթարան (1ա—26ա):

բ. Աղոթք Անաստասա քահանայի (26բ—36բ):

գ. Տոնացույց-Պարպատոմար (37ա—89ա):

դ. Տարացուցակ Ամենայն Պատուհարաց (Ախթարք) (89բ—112բ):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

(Գրչի) թ. 26ա.

«Ով իմ հոգեւոր հայր տէր տէր,
յորժամ այս յաղօթս քաղես
յայնժամ կբակմամեղ սանդուխտս
յիշես, որ եմ մեղօք լի.
ով սուրբ հայր մէկ պատարագի
կմեղաւորս յիշէ. աղաչեմ»:

(Գրչի) թ. 36բ.

«Ով սուրբ ճգնաւորդ. կարդա՛
եւ յորդ արտասուս թափեա.
կբակմամեղս յիշեա՛.
թողութիւն արարածոյ»:

Աղոթարանի վերջավորության երևցող հիշատակարանեն կհայտնվի գրչին անունը՝ Սանդուխտ: Սա բացառիկ պարագա մըն է՝ նկատի առած իգական սեռի պատկանող գրիչ մը ըլլալը: Իրոք շատ հավվագյուտ է որ հայ հնագույն ձեռագիրներու հիշատակարաններեն հայտնվի կնոջ մը անունը որպես գրիչ: Հիշատակարաններու (թ. 26ա և 36բ) և ամբողջ մատյանի գրիչը միևնույն անձն է որ բոլորագիր գրով գրած է աղոթարանը շատ ընթեռնելի ու գովասանքի արժանի հստակ գիրով: Ենթավերնագրերն ու պարբերությանց առաջին գիրերը կարմիրով և ավելի խոշոր գրված են և սակայն մեծ մասով գունատած և երբեմն անընթեռնելի: Իսկ Պարպատոմարի առաջին էջը, գագաթին, ունի հորիզոնական գունապարդ մանրանկար մը, երկրաչափական գիծերով (փոխն ի փոխըն շրջված եռանկյուններ՝ ուղղանկյուն քառանկյան մը մեջ), ինչպես նաև «Եօթներեակ»ի Ե գիրը, որ գեղապարդ է, առանց սակայն կենդանական կամ բուսային կերպարի:

ԱՂՕԹԱՐԱՆԸ 137 համարներե բաղկացած աղոթքներու շարք մըն է՝ եպակի երկրորդ դեմքով արտահայտված և ուղղված առ Աստված: Իր ձևին մեջ և իր բառամթերքով շատ կհիշեցնե Ս. Ներսես Շնորհալիի «Հաւատով Խոստովանիմ» աղոթքը: Դժբախտաբար, սակայն, թերթերու անկման հետևանքով կպակսին առաջին 58 համարները: Մեկի համար տակավին անծանոթ այս աղոթարանեն կարտագրեմ մի քանի համարներ որպես նմույշ:

ԾԹ (59) «Փրկեա զիս տէր ի գաղտնաձիգ նետից սատանայի որ բակում մեքենայիւք պատեալ պաշարէ զիս. աւար առեալ զմիտս իմ վարէ ի գե-

ռութիւն ցանկութեան մեղաց առնելով ծաղր եւ այլն կատականաց թշնամեաց իմոց»:

Կ (60) «Ամրացո զիս տէր երկիւղիւ քո. զօրացոյ զօրութեամբ քո. զհիւանդութիւն հոգւոյ իմոյ առողջացոյ եւ զցաւս մարմնոյ իմոյ բժշկեայ. եւ զչերմութիւն սիրոյ քո հաստատեայ ի սրտի իմոյ չարչարակից լինել սրբոց քոց»:

ԿԳ (63) «Զերծոյ զիս տէր ի լերինս քարանձաւի կամ ի տեղի անապատի ուր եւ ողորմութիւն քո առաջնորդեսցէ ինձ հանդիպել մեծի փառաց անուան քո. տալ ինձ զթեւս աղաւնակերպ հոգւոյդ սրբոյ թռչել վերանալ խառնիլ յերամս արդարոցըն»:

ՀԸ (78) «Տուր ինձ տէր տեղի ապաշխարութեան հանգիստ, խաղաղութեան հոգի եւ արդարութեան ճանապարհ, ամրութեան զէն եւ պահապան, փրկութեան յոյս եւ պնդութեան երկիւղ:

ՁԳ (83) «Ընջեայ տէր զբազմութիւն մեղաց իմոց եւ թափեա զմրուր դառնութեան յանցանացս. եւ պարարեա զսիրտ իմ արբմամբ սուրբ հոգւոյդ եւ զփշաբույս մարմինս իմ լցոյ շնորհօք զարգացոյ եւ ի պըտղաբերութիւն փոխարկեայ»:

ԱՂՕԹՔ ԱՆԱՍՏԱՍԱՅ ՔԱՀԱՆԱՅԻ կսկսի Սաղմոս Զ 2-ի հետևյալ համարով. «Տէր մի սրտմտութեամբ քո յանդիմաներ զիս եւ մի բարկութեամբ քո խրատեր զիս»:

Աղոթքի սկիզբն. «Գիտեմ տէր թէ անսերելի պատուհաս կայ առաջի իմ. յորժամ հանդերձեալ ես նստիլ յաթոռ դատողական, եւ յայնժամ առաջի հրեշտակաց եւ հրեշտակապետաց յայտնին ամենայն գործք մեղաց իմոց, եւ չիշխեմ համարձակ երեսօք զկատարեալ թոլութիւն մեղաց իմոց խնդրել ի քէն, տէր իմ, զի առաւել քան զամենայն մարդ առ քեզ յանցեայ եւ առաւել քան զչափն զանուն քո դառնացուցի...

Աղոթքի ավարտն. «Արտասուեաց Պետրոս եւ միայն թողութիւն խընդրէր, եւ դու զփականս արքայութեան քո ետուր նըմայ: Եւ արդ տէր այդպիսի են ողորմութիւն քո տէր. զի անյոյսն եւ ի բազմամեղսն եւ ի մահացեալսն ցուցանեն զմեծութիւն արքայութեան քո: Եւ Արդ, մարդասիրապէս ողորմեա ինձ որպէս անկելոյն ի ձեռս աւազակացն. եւ մի անտես առներ ի գործս ձեռաց քոց եւ քեզ փառք յաւիտեանս, յաւիտենից. ամէն»:

ՊԱՐԶԱՏՈՄԱՐ. Ձեռագրին կեսը եկեղեցական տոնացույցե (Պարզատոմար) կբաղկանա (թ. 37ա—89ա) և որ կհամապատասխանե մեզի ծանոթ Տոնացույցի Բ հատորին իր համառոտյալ ձևին մեջ: Վերնագիրն է՝ «ըստ պարզատոմար Հռոմայեցւոց»: Աջ լուսանցքին մեջ նշված են գլխատառերը (Ա—Քֆ) որոնք տարեգիրները կներկայացնեն, իսկ Յոթներյակներուն կից գրված է մեզի ծանոթ Հռոմայեցվոց յոթներյակին թիվը՝ երբեմն լման գրությամբ և երբեմն միայն գիրերով (չորս, բ. գ. հինգ, ևն.): Տոնացույցի այս Բ հատորը իր թվականներու հաշվումներով ճըշգրիտ օրինակ մըն է, առանց սխալի. սակայն բաղդատմամբ տպագրված Տոնացույցին, շատ համառոտ է և առձեռն: Բովանդակությունը կմատնե Տոնացույցին հին ըլլալը, Սիմեոն Երևանցիի կանոնադրածեն շատ ավելի կանուխ: Օրինակի համար «յղութիւն Եղիսաբէթի» տոնը որպէս անշարժ տոն նշված է ամեն տարի (Հոկտ. 10), տոն մը որ արդեն մուտք չէ գործած մեր ներկա Տոնացույցին մեջ: Կամ «ըմբռնաղ» կոչված մեզի անծանոթ հիշատակություն մը նշված է իր հաստատ թվականովը (Նոյեմբեր 23): Համաձայն Հ. Աճառյանի, Ըմբռնաղը կհանդիպի «Նոյեմբեր 24-ին, երբ հոտերը փարախ են քաշում ձմերելու համար»: Տես **Արմատական Բառարան**, Բ (Երևան), 1973, էջ 121: Հետաքրքրական են նաև Տոնացույցին բառամթերքը՝ «անկաստեղ», «ելաստեղ», իրենց համապատասխան թվականներով, որոնք պիտի նշանակեն աստղի անկումն ու աստղի ծագումը:

Ձեռագրի վերջավորության կա ԱԽԹԱՐՔ մը՝ «Տարացուցակ ամենայն պատուհարաց»: Հոս 12 ամիսներու հատուկ կենդանակերպերը՝ Խոյեն մինչև Ձուկ, կգուշակեն տարվան պատահարները: Օրինակ.

«Յորժամ Խոյն լինի տանուտէր, գարունն անձրեւ պիտանի գայ, եւ տեղաց ի տեղ նեղին անձրեւաց...»

«Յորժամ Ձուկն լինի տանուտէր, գարունն հողմային եւ անձրեւուտ, յա-

ռաջն քատ մի սերմանել, վի մուտք տարւոյն չէ աղէկ...»

«Յորժամ Առիւծն լինի ունի աստղ կարեգակն, ունի բնութիւն կառիծու եւ կիրոյ. գարունն աղէկ լինի, դաշտք լիարարք, գինի աղէկ լինի...»:

րայ իրերաց, եւ սպատերազմին ի քաղաքըս...»

«Սաւիմի թէ լուսինն խաւարի նշան է արեան հեղութեան ի մէջ թագաւորաց. ելանէ թագաւոր ումն եւ կիամիթ առնու եւ գան լինի արանց բազմաց մահ. ի մէջ



Մի էջ Սանդուխտի աղոթարանից

Ախթարքին մաս կկազմեն հայկական հին ամիսներու ընթացքին պատահած լուսնի խավարումները իրենց հատուկ գուշակություններով, Նավասարդեն (Օգոստոս) մինչև Մարերի (Մայիս): Կորսված թերթերու հետևանքով կպակսին Տրե (Նոյեմ.), Քաղոց (Դեկտ.), Արաց (Հունվ.), Մարգաց (Հունիս) և Հրոտից (Հուլիս) ամիսները: Տանք օրինակներ.

«Ի նաւասարդի թէ լուսինն խաւարի, չատ ձիւն գայ եւ լինի եղեմն, եւ պարզինայ, եւ դառնութիւն աւդոց, եւ հընդիկք մեծամեծք մեռանին եւ նեղութիւն լինի. ի քաղաքաց եւ ամառն պատերազմունք բաց լինի. մարախ գայ, վնաս ոչ առնէ եւ բարի լինի...»

«Հոռի թէ լուսինն խաւարի թագաւոր ումն ելանէ յարեւելից եւ առնէ արեան հեղութիւն. չատ յարեւմուտս լինի, եւ պարսիկս սով, եւ յառնեն մեծամեծք ի վեթագաւորաց խաղաղութիւն լինի թէ բակունի լուսինն...»

«Մեհեկի թէ լուսինն խաւարի, արեան հեղութիւն լինի, ահ եւ սասանութիւն քաղաքաց բազմաց, անձրեւք պակասին եւ նեղութիւն մեծ լինի. թագաւորն սպանանէ կոսոխն իւր թէ բակունի լուսինն...»:

Թիվ 112 թերթով կավարտի այս ձեռագիրը, ուր կիսով արձանագրված է Մարերի ամսու գուշակությունները: Մնացյալ թերթերը կորսված են:

Ձեռագրի վերոհիշյալ երկու մասերը՝ Պարկատոմարն ու Ախթարքը, հրատարակված են ավելի ընդարձակ հատորի մը մեջ՝ **Բուն Տօմար Հայոց եւ Հռոմայեցւոց, Պարկատոմար, եւ Տաղ Յովասափու, Մարմնախաղաց** եւ **Երազահան** (ՌՄԾԲ)—1803, Կ. Պոլիս:

ԶԱՎԵՆ Ծ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ